

թեամբ ինչ լինիցի հնար: 15 Այսպես սպասեին նմա: 16 Եւ եղել յաւուր միոջ հրաման ետ Վարազդատ արքայ Յայոց ընթրիս մեծ գործել եւ մեծ պատրաստութիւն առնել: Եւ կոչել հրամայեաց յընթրիսն զամենայն աւագս պատուականս եւ զմեծամեծս, եւ զգաւրավարն Մուշեղ: 17 Պատրաստեաց Վարազդատ արս ընտիրս հզարս, զաւրեղք, զի կազմ կայցեն գործոյն, հարկանել յանկարծաւրէն յանպատրաստից յեղակարծումս ժամու ի վերայ Մուշեղի: 18 Չնոսա քաջ ուրախ առնէր մեծապէս, եւ շատ գինի տայր ըմպել, եւ բազում առնէր զբաւսումն ուրախութեան: 19 Արքայն Վարազդատ տայր նշանս յառաջագոյն այնոցիկ, զոր էր սպանաւղն պատրաստեալ, եթէ յորժամ գիտիցես՝ թէ քաջ արբեալ իցէ, եւ զմտաւք զառանցեալ յարբեցութենէ սպարապետն Մուշեղ, ես յարուցեալ իբրեւ ի ճեմիշն երթալոյ պատճառաւ, եւ դուք պատեսչիք զնովաւ: 20 Եւ եղել իբրեւ անցին զառանցին ի գինւոյն՝ ըստ չափ անցանելով, եւ թագաւորն Վարազդատ պահէր զանձն ի գինւոյն: 21 Իբրեւ գիտաց Վարազդատ՝ թէ արդ յարբեցութենէ մտաց ինչ չզգան¹, ինքն յարուցեալ իբրեւ յապարահէ զանց առնելոյ պատճառաւ, եւ աւագանին ամենայն բազմականացն յոտն կացին առ հասարակ, իբրեւ նմա պատիւ ինչ առնել: 22 Եւ յանկարծ արքն, որոց էր տուեալ հրաման, երկոտասան այր կից զոյգ զկնի կողմանէ զնմանէ բուռն հարկանէին, վեց այր ի մի բազուկն Մուշեղի, եւ վեց այր ի միւս բազուկն: 23 Եւ ընդ ոտն կալ թագաւորին, նայեցեալ ընդ նա՝ եթէ՝ Այս ընդէ՞ր է. եւ թագաւորին պատասխանի տուեալ, ասէ. Երթ առ Պապ արքայ, հարց եւ տես՝ թէ ընդէ՞ր է այդ: 24 Եւ թագաւորն ի դուրս կոյս զնացեալ ելանէր, եւ ասէ Մուշեղ. Ի վերայ բազում իմոց վաստակոցն արեան եւ քրտան, եւ սլաքաւքն զքիրտն ջնջելոյ, ա՛յս հատուցումն եղել ինձ: 25 Բայց իբրեւ եհաս ինձ մահս, թէ ի վերայ ձիոյ դիպեալ էր...: 26 Չայս միայն բանս ժամանեաց ասել, եւ այլ ոչ ինչ ոչ: 27 Եւ անդէն Բատ Սահառունի, դայեակն արքային Վարազդատայ, զնրանն՝ զոր յիւրում ազդերն ունէր՝ հանեալ, անցոյց ընդ փողս զաւրավարին Մուշեղի. եւ անդէն ի բաց եհատ զգլուխ նորա: 28 Եւ բարձին զնա, եւ տարան զմարմին նորա ի գեւղն իւր:

ԳԼՈՒԽ ԼԶ.

1 Յաղագս անմտութեան կարծեաց ընդանեացն Մուշեղի, եւ այլ մարդկանն:

2 Եւ եղել իբրեւ տարան զմարմինն սպարապետին Մուշեղի ի տուն իւր առ ընտանիս իւր, ոչ հաւատային ընդանիք նորա մահուն նորա, թեպէտ եւ տեսանէին զգլուխ նորուն զատ ի մարմնոյն անտի: 3 Չի ասեին. Դորա յանթիւ ճակատ մտեալ էր, եւ վեր երբէք չէր առեալ. ոչ նետ մի դիպեցաւ երբէք,

¹ Յամենայն օրինակս՝ մտաց ինչ չզգան